

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

2024-2025թթ. ուսումնական տարվա դիզայն հոսքի 10-րդ դասարանի ընդունելության
«Մաթեմատիկա» առարկայից գիտելիքների ստուգման տոմսի նմուշ

1. /1,5 միավոր/ 84-ը 60-ից քանի՞ տոկոսով է մեծ:

2. /2,5 միավոր/ Հաշվել $\frac{a^3 + 5a^2}{ab} : \frac{a+5}{b^2}$ արտահայտության արժեքը, եթե $a = 2$, $b = \frac{1}{2}$:

3. /3 միավոր/ Լուծել անհավասարումը.

$$\frac{x+1}{x-2} \geq 1:$$

4. /3 միավոր/ Լուծել հավասարումների համակարգը.

$$\begin{cases} x \cdot y = 25 \\ x + y = 10 \end{cases}:$$

5. /3 միավոր/ Աշակերտն իր գումարի $\frac{2}{3}$ մասը վճարեց գրքի համար, իսկ $\frac{1}{6}$ մասը՝ տետրերի համար, որից հետո իր մոտ մնաց 300 դրամ: Որքա՞ն դրամ ուներ աշակերտը:

6. /3 միավոր/ Քառակուսու անկյունագիծը 20սմ է: Գտնել այդ քառակուսու կողմը:

7. /4 միավոր/ Մի կետից շրջանագծին տարված են հատող և շոշափող: Որոշել շոշափողի երկարությունը, եթե նա հատողի արտաքին մասից 5 սմ-ով մեծ է, իսկ ներքին մասից՝ նույնքանով փոքր:

* Ցանկացած վարժության կամ խնդրի լուծում անհրաժեշտ է ներկայացնել քայլ առ քայլ:

* Երկրաչափական խնդրի լուծումը ներկայացնել նաև գծագրով: